Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1210 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

# ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ՎԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ (ՀԱՇՎԱՌՄԱՆ) ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱ-ՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են շարժական գույքի կադաստր վարող մարմինների կողմից՝ հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկությունները փոխադրամիջոցների գույքահարկը և գույքահարկ վճարողներին հաշվառող՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ տեղական ինքնակառավարման մարմիններ) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ըստ առանձին հարկ վճարողների՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների:

3. Երևան քաղաքի վարչական սահմաններում հաշվառված (գրանցված) փոխադրա-միջոցների վերաբերյալ տեղեկությունները լիազոր մարմնի կողմից ներկայացվում են Երևանի համայնք՝ խմբավորված ըստ փոխադրամիջոցների գրանցման (հաշվառման) վայրի համապատասխան վարչական շրջանների:

4. Տեղական ինքնակառավարման մարմիններ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման նպատակով տեղեկություններ են ներկայացնում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության

(այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) տարածքային ստորաբաժանումները՝ էլեկտրոնային կրիչներով՝

ա. մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետությունում տվյալ տարվա հուլիսի 1-ի դրությամբ տվյալ համայնքի տարածքում հաշվառված (գրանցված) և գույքահարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների և մոտոցիկլետների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 1 ձևի,

բ. մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը՝ նախորդ ամսվա ընթացքում սույն ենթակետի «ա» պարբերությունում նշված ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների և մոտոցիկլետների սեփականատերերի փոփոխման վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 2 ձևի.

2) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները և (կամ) տարածքային մարմինները՝ թղթային և էլեկտրոնային կրիչներով՝

ա. մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ տվյալ համայնքի տարածքում տվյալ տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված (գրանցված) և գույքահարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող ջրային փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 3 ձևի,

բ. մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը՝ նախորդ ամսվա ընթացքում սույն ենթակետի «ա» պարբերությունում նշված ջրային փոխադրամիջոցների սեփականատերերի փոփոխման վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 4 ձևի.

3) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ տվյալ եռամսյակի ընթացքում տեխնիկական զննություն անցած՝ Երևանի

վարչական սահմաններում հաշվառված (գրանցված) տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն N 5 ձևի:

5. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ և 3-րդ ենթակետով նախատեսված տեղեկությունները՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ ներկայացվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ մինչև 2018 թվականի փետրվարի 15-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

<u>Ձև N 1</u>

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

20 ___ թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ __________________________ մարզի _________________________ համայնքում (Երևան քաղաքում՝ ______________________ վարչական շրջանում) հաշվառված (գրանցված) և գույքահարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների և մոտոցիկլետների վերաբերյալ

| NN ը/կ | Սեփականատիրոջ՝ | | | | | | | | Տրանսպորտային միջոցի՝ | | | | | | | | | | Իրավունքների՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆիզիկական անձի անունը կամ կազմակերպության անվանումը | ֆիզիկական անձի հայրանունը | ֆիզիկական անձի ազգանունը | ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական գրանցման համարը | ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն | ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրը՝ | | | մակնիշը (մոդելը, տիպը) | նույնականացման համարը (VIN կոդը) | հաշվառման (պետական) համարանիշը | թողարկման տարեթիվը | շարժիչի հզորությունը (ձիաուժ) | տեսակը (նստատեղերի թիվը) | հաշվառման (գրանցման) ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | տեխնիկական անձնագրի համարը | թափքի տեսակը | թափքի համարը | պետական գրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | սեփականության ձևը (անհատական կամ ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ) |
| | | | | | | փողոցը | շինության (շենք, տուն, հաստատություն) համարը | բնակարանի (սենյակի) համարը | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 1. | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Ճանապարհային ոստիկանության __________________________ տարածքային ստորաբաժանման ղեկավար

________________________ (ստորագրությունը)

Կ.Տ. ___________________________________ (անունը, ազգանունը)

____ _________________ 20 ___թ.

1. Մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար 15-րդ սյունակում լրացվում է 1 թիվը:
2. Մոտոցիկլետների համար 15-րդ սյունակում լրացվում է 2 թիվը:
3. 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար 15-րդ սյունակում լրացվում է 3 թիվը:
4. Բեռնատար, բեռնաուղևորատար ավտոմեքենաների համար 15-րդ սյունակում լրացվում է 4 թիվը:

Ձև N 2

# Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

20 ___ թվականի ______________ ամսվա ընթացքում ՀՀ _________________ մարզի _____________________ համայնքում (Երևան քաղաքում՝ __________________ վարչական շրջանում) հաշվառված (գրանցված) ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների և մոտոցիկլետների սեփականատերերի փոփոխման վերաբերյալ

| NN ը/կ | Նախկին սեփականատիրոջ՝ | | | | | | | | Նոր սեփականատիրոջ՝ | | | | | | | | Տրանսպորտային միջոցի՝ | | | | | | | | | | Իրավունքների՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆիզիկական անձի անունը կամ կազմակերպության անվանումը | ֆիզիկական անձի հայրանունը | ֆիզիկական անձի ազգանունը | ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը | ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն | ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպու-թյան գտնվելու վայրը՝ | | | ֆիզիկական անձի անունը կամ կազմակերպության անվանումը | ֆիզիկական անձի հայրանունը | ֆիզիկական անձի ազգանունը | ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը | ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն | ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրը՝ | | | անվանումը (մակնիշը, տիպարը) | նույնականացման համարը (VIN կոդը) | հաշվառման (պետական) համարանիշը | թողարկման տարեթիվը | շարժիչի հզորությունը (ձիաուժ) | տեսակը (նստատեղերի թիվը) | հաշվառման (գրանցման) կամ խոտանման (դուրսգրման) ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | հաշվառման վկայագրի (տեխնիկական անձնագրի) սերիան, համարը | թափքի տեսակը | թափքի համարը | պետական գրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | սեփականության ձևը (ամբողջը կամ ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ) |
| | | | | | | փողոցը | շինության (շենք, տուն, հասարակական) համարը | բնակարանի (սենյակի) համարը | | | | | | փողոցը | շինության (շենք, տուն, հասարակական) համարը | բնակարանի (սենյակի) համարը | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 |
| 1. | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Ճանապարհային ոստիկանության ________________________ տարածքային
ստորաբաժանման ղեկավար

______________________ (ստորագրությունը)

Կ.Տ. ________________________________ (անունը, ազգանունը)

____ ________________ 20 ___թ.

1. Մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար 23-րդ սյունակում լրացվում է 1 թիվը:
2. Մոտոցիկլետների համար 23-րդ սյունակում լրացվում է 2 թիվը:
3. 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար 23-րդ սյունակում լրացվում է 3 թիվը:
4. Բեռնատար, բեռնաուղևորատար ավտոմեքենաների համար 23-րդ սյունակում լրացվում է 4 թիվը:

<u>Ձև N 3</u>

# Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

20___ թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ __________________ մարզի ___________________ համայնքում (Երևան քաղաքում՝__________________ վարչական շրջանում) հաշվառված (գրանցված) և գույքահարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող ջրային փոխադրամիջոցների վերաբերյալ

| NN ը/կ | Սեփականատիրոջ՝ | | | | | | | | Ջրային փոխադրամիջոցի՝ | | | | | | | | | Իրավունքների՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆիզիկական անձի անունը կամ կազմակերպության անվանումը | ֆիզիկական անձի հայրանունը | ֆիզիկական անձի ազգանունը | ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը | ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն | ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրը՝ | | | անվանումը (մակնիշը, տիպարը) | նույնականացման համարը (VIN կոդը) | հաշվառման (պետական) համարանիշը կամ գրանցման կոդը | թողարկման տարեթիվը | քարշող շարժիչների գումարային հզորությունը (ձիաուժ) | տեսակը (նստատեղերի թիվը) | հաշվառման (գրանցման) տվյալներով սեփականության իրավունքի ծագման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | տեխնիկական անձնագրի համարը | այլ նշումներ | պետական գրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | սեփականության ձևը (ամբողջը կամ ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ) |
| | | | | | | փողոցը | շինության (շենք, տուն, հասարակական) համարը | բնակարանի (սենյակի) համարը | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 1. | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | | | | | | | | | | |

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարության աշխատակազմի ՀՀ տրանսպորտային տեսչության
____________________________ կառուցվածքային ստորաբաժանման
կամ ______________________ տարածքային մարմնի ղեկավար
____ ______________ 20___ թ.

_________________ (ստորագրությունը)

Կ.Տ. __________________________________ (անունը, ազգանունը)

17_1210

Ձև N 4

# Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

20___ թվականի_________ ամսվա ընթացքում ՀՀ __________________ մարզի ________________ համայնքում (Երևան քաղաքում՝_______________ վարչական շրջանում) հաշվառված (գրանցված) ջրային փոխադրամիջոցների սեփականատերերի փոփոխման վերաբերյալ

| NN ը/կ | Նախկին սեփականատիրոջ | | | | | | | | Նոր սեփականատիրոջ | | | | | | | | Ջրային փոխադրամիջոցի | | | | | | | | | Իրավունքների՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆիզիկական անձի անունը կամ կազմակերպության անվանումը | ֆիզիկական անձի հայրանունը | ֆիզիկական անձի ազգանունը | ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը | ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն | ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրը՝ | | | ֆիզիկական անձի անունը կամ կազմակերպության անվանումը | ֆիզիկական անձի հայրանունը | ֆիզիկական անձի ազգանունը | ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմա-կերպության պետական ռեգիստրում գրանցման համարը | ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն | ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրը՝ | | | անվանումը (մակնիշը, տիպարը) | նույնականացման համարը (VIN կոդը) | հաշվառման (պետական) համարանիշը կամ գրանցման կոդը | թողարկման տարեթիվը | քարշող շարժիչների ընդհանուր հզորությունը (ձիաուժ) | տեսակը (նստատեղերի թիվը) | հաշվառման (գրանցման) տվյալներով սեփականության իրավունքի ծագման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | տեխնիկական անձնագրի համարը | այլ նշումներ | պետական գրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | սեփականության ձևը (անհատական կամ ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ) |
| | | | | | | փողոցը | շինության (շենք, տուն, հաստատություն) համարը | բնակարանի (սենյակի) համարը | | | | | | փողոցը | շինության (շենք, տուն, հաստատություն) համարը | բնակարանի (սենյակի) համարը | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 |
| 1. | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի ՀՀ տրանսպորտային տեսչության ___________________________ կառուցվածքային ստորաբաժանման կամ _____________________ տարածքային մարմնի ղեկավար

____ ______________ 20___ թ.

_________________ (ստորագրությունը)

Կ.Տ. _________________________________ (անունը, ազգանունը)

17_1210

Ձև N 5

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20___ թվականի _________ եռամսյակի ընթացքում տեխնիկական զննություն անցած՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում հաշվառված (գրանցված) տրանսպորտային միջոցների վերաբերյալ

| NN ը/կ | Սեփականատիրոջ | | | | | | | | Տրանսպորտային միջոցի | | | | | | | | | | | | Իրավունքների՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆիզիկական անձի անունը կամ կազմակերպության անվանումը | ֆիզիկական անձի հայրանունը | ֆիզիկական անձի ազգանունը | ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը | ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն | ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրը՝ | | | անվանումը (մակնիշը, տիպարը) | նույնականացման համարը (VIN կոդը) | հաշվառման (պետական) համարանիշը | թողարկման տարեթիվը | շարժիչի հզորությունը (ձիաուժ) | տեսակը (նստատեղերի թիվը) | հաշվառման (գրանցման) ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | տեխնիկական անձնագրի համարը | թափքի տեսակը | թափքի համարը | տեխնիկական զննության ամսաթիվը, ամիսը, տարեթիվը | տեխնիկական զննության կտրոնի համարը | պետական գրանցման ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը) | սեփականության ձևը (ամբողջը կամ ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ) |
| | | | | | | փողոցը | շինության (շենք, տուն, հասարակական) համարը | բնակարանի (սենյակի) համարը | | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 1. | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
Տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար

____ ______________ 20___ թ. _________________ Կ.Տ. _________________________________

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

1. Մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար 15-րդ սյունակում լրացվում է 1 թիվը:
2. Մոտոցիկլետների համար 15-րդ սյունակում լրացվում է 2 թիվը:
3. 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար 15-րդ սյունակում լրացվում է 3 թիվը:
4. Բեռնատար, բեռնաուղևորատար ավտոմեքենաների համար 15-րդ սյունակում լրացվում է 4 թիվը: